

միջնորդութեամբ ստիպեցին Նալեան Պատրիարքը, որ իրեն Առաջնորդ անուանած թովմաս Վ. Թամսարալեանի տեղ, որ գինարբու մէկն էր եւ Գաղատիոյ վանքը կը նստէր, Պահատուր Պետրոս վարդապետը դարձեալ Առաջնորդ դնէ: Պատրիարքն Պահատուր Վ.ին սպառնացաւ՝ որ եթէ երեք Աթոռները չյիշէ Պատարագին մէջ, հանգիստ պիտի չթողու զինք (Ձամչ. 825, Աւգեր. 96—104):

Պահատուր Վ.ին հետ Սիմոն Եպ. Ումուտեան եւ Տէր Սուքիաս դարձան Գաղատիա, երկու կողմանէ սիրով ընդունուեցան, եւ երբ յաջորդ օրն Ումուտեան Եպիսկոպոս՝ Առաջնորդին հրամանաւ Պատարագի մէջ երեք աթոռները յիշեց, դպիրք եւ ժողովուրդք թողուցին դուրս ելան եկեղեցիէն, եւ ստիպեցին Առաջնորդն, որ այլ եւս չյիշուի: Նալեան Պատրիարք սաստիկ սպառնալիքներ գրեց, բայց քանի որ ողջ էր Ամէտճի Իֆէնտի, չկրցաւ բան մ'ընել: Երբ 1744ին Ամէտճի Իֆէնտի մեռաւ, Պատրիարքը նոր հրովարտակ մը հանեց, եւ Նիկոմեդիոյ Առաջնորդ Աթանաս վարդապետը խիստ ֆէրմանով Գաղատիա զրկեց: Աթանաս վարդապետ տեսնելով որ զինք մտիկ չեն ըներ, բանտարկել եւ Սամսոնի բերդն աքսորել տուաւ՝ Պահատուր օղու Պետրոս Վ.ը, Ումուտ օղու Սիմոն Եպիսկոպոսը, Մէհտէր օղու Գէորգ Վ.ը, եւ աշխարհականներէն՝ Մելքոն օղու Մուրատ աղա եւ եղբայրը Հաճի Խուպեարը, Հաճի Ֆերաշաթ, Իփրիմ օղու Արթին չէլէպի, Վար-